Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Ներքին Բազմաբերդի Ե.Ասատրյանի անվ.միջ.դպրոց>>ՊՈԱԿ

Թեմա՝ Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝Սաթենիկ Սաֆարյան

Ուսուցիչ՝Հասմիկ Ասատրյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 2

1.Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումը---------- 3

2. Սովորողների իրավունքների և ազատությունների պահպանումը առարկայի դասավանդման շրջանակներում ---------- 9

Եզրակացություն---------- 16

Գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Արդիականությունը: Հասարակագիրություն բառի կազմությունը ներառում է «հասարակություն» և «գիտություն» բառերը, այսինքն այն գիտություն է հասարակության մասին: Այստեղից հետևություն, որ նրա ուսումնասիրության օբյեկտը հասարակությունն է: Հասարակական գիտությունների ուսումնասիրման առարկան մարդն է և հասարակությունը:

«Հասարակագիտություն» առարկան միջին դպրոցում ներառում է նախնական գիտելիքներ փիլիսոփայությունից, իրավագիտությունից, բարոյագիտությունից, գեղագիտությունից, իսկ ավագ դպրոցում ներկայացվում է տարբեր բաղադրիչների՝ փիլիսոփայության, քաղաքագիտության, իրավագիտության, տնտեսագիտության, բարոյագիտության, գեղագիտության, հոգեբանության ձևով:

Հասարակագիտության կրթական ներուժը ժամանակակից աշխարհում ամենուրեք կարևորվում է, կարևորվում է նաև կրթական գործընթացի հումանիզացման պահանջը: Նեղ մասնագիտական կրթության գերիշխանության պայմաններում առաջանում են մասնագիտական հանրություններ, որոնց ներկայացուցիչները միմյանց հետ հաղորդակցվելու ընդհանուր հումանիտար հիմքից զուրկ լինելու պատճառով, որպես կանոն, բախվում են:

Կրթության մեջ տեխնիկական միջոցների ներդրման հարաճուն միտումներին դրականապես հակազդելու և ժամանակակից աշխարհում ի հայտ եկած մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում:

Նպատակը: Անձնային զարգացման բաղադրիչ-«Հասարակագիտություն» առարկան իր մեջ ներառում է հասարակության հետ առնչվող յուրաքանչյուր իրողություն, անհատին տալիս է ազատ մտածելու կարողություն, այն հնարավորություն է տալիս դատարկ միտքը բաց մտքով փոխարինելու: Քանզի մարդու միտքը նման է օդապարիկի այն աշխատում է, երբ բաց է:

1.Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումը

Մանկավարժական տեխնոլոգիաներում կարևոր սկզբունքային մոտեցումներից է դաստիարակության գործընթացում երեխայի դիրքի իմաստավորումը, նրա նկատմամբ վերաբերմունքի դրսևորումը: Ազատ դաստիրակության տեխնոլոգիաները երեխային ընձեռում են ընտրության, ինքնուրույնության դրսևորման հնարավորություն: Անձնային կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաները հանրակրթության հիմքում դնում են երեխայի անձը, նրա անձի զարգացման համար համապատասխան պայմանների ապահովումը: Անձնային կողմնորոշում ունեցող մանկավարժական տեխնոլոգիաներն իրենց հերթին լինում են՝ տեղեկատվական, ինքնազարգացնող, էվրիստիկական, գործառական, կիրառական: Տեղեկատվական տեխնոլոգիաները իրագործում են սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը: Ինքնազարգացնող տեխնոլոգիաները ուղղված են անձի որակների ինքնակառավարման մեխանիզմների ձևավորմանը, իսկ էվրիստիկական տեխնոլոգիաները զարգացնում են երեխայի ստեխծագործական ընդունակությունները: Գործառական տեխնոլոգիաների խնդիրը մտածողության խթանումն է: Կիրառական տեխնոլոգիաները ապահովում են անձի գործնական կարողությունների ձևավորումը:

21-րդ դարի արդիականության մեջ կրթության մեջ կարևոր հիմնախնդիր է դարձել այն փաստը, որ ուսուցիչը դադարել է աշակերտի համար տեղեկատվության հիմնական աղբյուր լինելուց:Այսօրվա պատանին ինֆորմացիա է ստանում գերազանցապես ոչ թե դպրոցից կամ ուսուցչից, այլ փողոցից, զանգվածային լրատվամիջոցներից, ծնողներից ու հասակակիցներից և,ամենակարևորը, համացանցից: Այս ամենը պահանջ է առաջացնում՝ վերափոխելու ողջ մանկավարժական գործընթացը: Ուսումը միտվում է դեպի անձնային կողմնորոշումը, և այսօր որպես ավանդական կրթական համակարգի բարեփոխման ուղիներ ներկայանում են.

- ուսուցման հումանիստական բնույթն ու ժողովրդավարական սկզբունքների կիրառումը
- իմացական գործունեության ակտիվացումը

- ուսումնական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովումը
- ուսումնական նյութի մեթոդական և դիդակտիկ պարագաների վերակազմավորումը:

Ընդ որում տեղի են ունենում նաև մանկավարժի հայացքների մեջ արժեքային կողմնորոշման փոփոխություններ: Ուսուցիչը պետք է գիտակցի, որ իր առջև կանգնածը ոչ թե սոսկ երեխա է, որին հարկավոր է միայն գիտելիքներ հաղորդել կամ դաստիարակել, այլ մի անձ, որն ունի ինքնատիպ անահատականություն և որին հարկավոր է հարգել, գնահատել նրա արժեքը:

Անձնական կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաները բնութագրվում են մարդասիրական և հոգեբանավերականգնողական /փսիխոթերապևտիկ/ ուղղվածությամբ և հետապնդում են սովորողների ազատ, բազմակողմանի և ստեղծագործական զարգացման նպատակներ: Անձնայինմ կողմնորոշում ունեցող տեղնոլոգիաները բացահայտում են այն նոր նոտեցումները, որոնք վերաբերում են մեր արդիականության մեջ ինչ և ինչպես սովորեցնելու խնդիրներին: Առաջին հերթին, ուսման բովանդակությունը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց և ոչ թե սոսկ նպատակ, ակտիվորեն օգտագործվում են ուսուցման խթանման բոլոր հնարավոր միջոցները, տեղի է ունենում ուսուցման տարբերակվածություն՝հենվելով գործունային մոտեցումներին և այլն: Անձնային կողմնորոշում ունեցող դասի ընթացքում ոչ միայն գիտելիքներ են մատուցվում, այլև բացահայտվում են սովորողների անհատական առանձնահատկությունները:[1, 25-28]

Անձնային կողմնորոշում ունեցող դասի առանձահատկությունը յուրաքանչյուր սովորողի ինքնատիպությունը հաշվի առնելն է:Դասը նպատակամիտված է աշակեռտնաերտներիի ինքնուրույնությունը խթանելուն,նրանց հնարավորություն է ընձեռում հարցեր տալու, վարկածներ և օրիգինալ գաղափարներ առաջ քաշելու: Կազմակերպում է մտքերի,կարծիքների ու գնահատումների փոխանակություններ, խթանում վարկածներ առաջ քաշելու, ինքնատիպ գաղափարներ արտահայտելու միտումները և այլն:Անձնային կողմնորոշում ունեցող դասը հենվում է յուրաքանչյուր աշակերտի ներքնազգացողության /ինտուիցիայի/ վրա: Անձնային կողմնորոշում ունեցող դասի ընթացքում ուսուցիչն ու աշակերտը իրավահավասար գործընկերներ

են, որպես տարբեր, բայց անհրա-եշտ փորձի կրողներ:Ուսուցչի արհեստավարժությունը երևում է հենց քննարկվելիք հարցին աշակերտների հայտնած կարծիքներին հարգանքով վերաբերվելու և հաշվի առնելու մեջ:Դասի ընտացքում միջանձնային փոխհարևաբերությունները ապահովում են հաղորդակցման զանազան ձևերի օգտագործումը:անձնային կողմնորոշում ունեցող ուսուցման համակարգում կարելի է առանձնացնել հետևյալ տեխնոլոգիաները՝ տարբերակված ուսուցման, կոլեկտիվ փոխուսուցման,համագործակցային,մոդուլային ուսուցման:

Ուսուցման այս տեխնոլոգիայի տեսական հիմքը խարսխվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառման և ըստ այդմ այն ժամանակահատվածի ընտրության համար: Ուսումնասիրվել են սովորողների հնարավորություններն այնպիսի պայմաններում, երբ նյութը յուրացնելում հատկացված ժամանակահատվածը սահմանապակված չի եղել: Եվ առանձնացվել են հետևյալ որակները. սակավ օժտվածներ, որոնք ի վիճակի չեն հասնելու գիտելիքների յուրացման նախանշված մակարդակին անգամ ժամանակի մեծ կորստի դեպքում տաղանդավորներ, օժտվածներ /մոտ5%/, որոնք արագորեն յուրացնու են այն, ինչը մյուների համար անհասանելի է սովորողներ,որոնք մեծամասնություն են կազմում /մոտ90%/, որոնց ՝ գիտելիքները յուրացնելու մակարդակը պայմանավորված է ուսումնական ժամանակի ծախսով: Եթե յուրաքանչյուր երեխայի հատկացվի իրեն անհրաժեշտ ժամանակը, որը համապատասխասխանում է իր հնարավորությունների և ընդունակուփյուններին,ապա իրականացնելու համար հարկավոր է ունենալ տարբերակված մակարդակի դպրոցներ, որոնցում աշակերտների հոսքերը բաժանվում են շարժական կազմով խմբերի, որոնք յուրացնում են ուսումնական նյութը մինիմալ/պետական ստանդարտներին, չափորոշիչներին համապատասխան/,բազային և տարբերակային/ստեղծագործական/մակարդակներով: Դպրոցի այսպիսի մոդելը իր մեջ ներառում է տարբերակված ուսուցման 3 տեսակներ.

1. Դասարանների կոմպլեկտավորումը՝ սկսած տարրական օղակից ՝ հենվելով անձի զարգացման դինամիկի բնութագրերի վրա,

2. Ներդասարանական տարբերակվածություն, որը նախատեսում է դասարանի կազմում /հատկապես միջին օղակում/տարբեր մակարդակի խմբերի առանձնացում:

3.Հիմնական դպրոցում պրոֆիլային ուսուցումը՝ հենված փսիխոդիագնոստիկային/հոգեբանական կանխատեսումը/, փորձարարական գնահատականին,ուսուցիչների և ծնողների հանձնարարականներին:[3, 54-57]

Այս տեխնոլոգիան ունի մի քանի անվանումներ՝ կազմակերպված երկխոսություն, փոփոխության կազմերով զույգերի աշխատանք: Այս տեխնոլոգիան աշխատելու ժամանակ օգտագործում են զույգերի երեք տեսակներ՝ ստատիկ, դինամիկ,տարբերակային: Ստատիկ զույգ:Այս դեպքում ըստ ցանկության միավորվում են երկու աշակերտներ,որոնք հերթով կատարում են ուսուցչի և աշակերտի ՝սովորողի և սովորեցնեղի դերը: Այսպես կարող են աշխատել կամ երկու թույլ աշակերտները,կամ երկու ուժեղները,կամ էլ մեկ ուժեղ և մեկ թույլի աշակերտը,եթե նրանք հոգեբանորեն համատեղելի են: Իր ընկերներին, համապատասխան նրանցից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունների ու ընդունակություններին: Տարբերակային զույգ:Այս դեպքում խմբի չորս անդամներից յուրաքանչյուրը ստանում է սեփական առաջադրանքը, կատարում այն, քննարկում ուսուցչի հետ, այնուհետև սովորեցնում է յուրացրածը իր ընկերներին: Ուսումնական պարապմունքներին հատկացված ժամանակը կարող է տարբեր լինել՝ կախված երեխաների տարիքից, պարապմունքի բովանդակությունից, ուսումնական նյութի ծավալից, և այն ժամանակից, որը նախատեսվում է տվյալ թեմայի համար: Այսպիսի տեխնոլոգիայով պարապմունքների անցկացումը ենթադրում է ուսումնական նյութի ընտրություն, լրացուցիչ գրականության և տեղեկատուների օգտագործում, նպատակային առաջադրանքների մշակում: Կոլեկտիվ ուսուցման առավելություններն են՝ կատարելագործվում են տրամաբանական մտածողությունն ու ընկալումը, փոխհաղորդակցման գործնթացում ակտիվանում է հիշողությունը, տեղի է ունենում նախորդ փորձի գիտելիքների արդիկանացում և մոբիլիզացում, յուրաքանչյուր մասնակից իրեն ազատ է զգում, կարողանում էաշխատել անհատական տեմպերով, առաջանում է Պատասխանատվության զգացում ոչ միայն սեփական աշխատանքի արդյունքների, այլև կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ, ձևավորվում է անձի ադեկվատ ինգնագնահատական՝ համապատասխան յուրաքանչյուրի անհատական հնարավորություններին ու ընդունակությունների, նույն ինֆորմացիայի

քննարկումը տարբեր գործընկերների հետ ապահովում է յուրացման առավել մակարդակ:

Այս տեխնոլոգիան ենթադրում է ուսուցումը կազմակերպել փոքր խմբերով: Ուսուցման հիմնական գաղափարը միասին սովորելն է, ոչ թե պարզապես իրար օգնելը , այլ թե սեփական , թե ընկերների հաջողությունները գիտակցելը: Ձևավորված խմբերով աշխատելու առավելություններն են.

- Համատեղ աշխատող խումբը բաղկացած է 3-6 մշտական անդամներից: Խմբի անդամների միջև կապը սերտ է.նրանք ճանաչում ,ընդունում և աջակցում են միմյանց:
- Խմբի կազմը միատարր չէ՝ մասնակիցների ընդունակությունները, սեռը, համակրանքը , և էթնիկական ծագումը տարբեր են:
- Խմբերի ձևավորման եղանակները՝ պատահական կամ նպատակային: Նման մեթոդներով աշխատելն զարգացնում է պատասխանատու անձ.
- Քարտուղարը պատասխանատու է ճիշտ խոսքի համար:
- Ժամանակը հաշվառողը պատասխանատու է ժամանակային սահմանափակումների հետևելու համար:
- Աշխատանքների կատարման պատասխանատուն ապահովում է բոլորի կողմից իրենց աշխատանքի պատշաճ կատարումն ու խմբում արդյունավետ հաղորդակցությունը:
- Խոսնակը պատասխանատու է ուսուցչի հետ կապ պահպանելու համար, զեկուցում է կատարված աշխատանքի մասին և ներկայացնում կատարված առաջադրանքը:[2, 32-36]

Խմբում առաջադրանքների բաշխումը, աշխատանքների կազմակերպումն ու կիրառվելիք մեթոդաբանության որոշումը (օրինակ՝ Կլոր սեղան ՝Բառերի շրջապտույտ՝,՝խաճանկար՝ և այլն): Այս մեթոդների կիրառումը ձևավորում է անձնական պատասխանատվություն. աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի

համար: Սովորում ենք միասին: Դասարանը բաժանվում է հավասար մակարդակների խմբերի՝ բաղկացած 3-5 մասնակիցներից: Յուրաքանչյուր խումբը ստանում է մեկական առաջադրանք, որը կազմում է մի մեծ թեմայի կամ նյութի բաղկացուցիչ մասը: Առանձին խմբերի և ամբողջ դասարանի ընդհանուր աշխատանքի արդյունքում յուրացվում է ամբողջական նյութը: Խմբի ներսում մասնակիցներն իրենք են որոշում յուրաքանչյուրի դերը ընդհանուր առաջադրանքը կատարելու համար: Խումբը լուծելու է երկու խնդիրներ՝ ստեղծագործական-իմացական նպատակի հասնելու ձգտում և համատեղ գործունեության կազմակերպում ու հաղորդակցման որոշակի մշակույթի ձևավորում: Խումբը մրցանակներ է ստանում,՝ կաղված յուրաքանչյուր աշակերտի հաջողության աստիժանից: Փոքր խմերով աշխատանքի կազմակերպման հիմնական գաղափարը, որը բնորոշ է վերը նշված բոլոր տեխնոլոգիաներին, նպատակների և խնդիրների ընդհանրությունն է, անհատական պատասխանատվության առկայությունը և հավասար հնարավորությունների ստեղծումը՝ հաջողության հասնելու համար: Այն ուսուցչին, որը փորձում է իրագործել համագործակցության տեխնոլոգիաները, հարկավոր է.

1. Ճիշտ տեղաբաշխել դասարանում երեղաների տեղերը, այնպես, որ նպաստավոր և հարմար պայմաններ ստեղծվեն զույգերով կամ փոքր խմբերով աշխատելու համար:

2. Կարողանալ դասարանը բաժանել խմբերի՝ հնարավորություններ ընձեռնելով յուրաքանչյուրին՝ ինքնուրույնաբար որոշելու իր կատարելիք դերն ու աշխատանքը:

3. Աշակերտին ընկերոջ հետ քննարկման և աշխատանքները փոխադարձաբար ստուգելու հնարավորություն տալ նախքան ստուգողական առաջադրանքի կամ թեստի վերջնական ամփոփումը:

4. Հենց դասի սկզբից և խմբային աշխատանքից առաջ հստակորեն ձևակերպել առաջադրանքի նպատակը:

5. Աշխատանքի ամբողջ ընթացքում հետևել բոլոր մասնակիցներին ակտիվությանը և օգնություն ցուցաբերել, որը զգում է դրա կարիքը:[1, 45-46]

2.Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները հասարակագիտության դասավանդման գործընթացում

Հասարակագիտությունը ներառում է իր մեջ մի շարք գիտություններ, որոնք ուսումնասիրում են հասարակական երևույթներն ու գործընթացները, բացատրում է սոցիալական երևույթները, հավաքելով և ամփոփելով դրանց մասին տեղեկատվություն, այն մեզ թույլ է տալիս կանխատեսել և ղեկավարել սոցիալական երևույթները:

Ինքնին հասկանալի է, որ անձնականն առնչվում է անձին, հասարակականը կոլեկտիվին:Անձի զարգացման վարքագծի հիմքում նախ և առաջ ընկած են ինքնահարգանքը, ինքնուրույնությունը, կայանալու մղումը, այսպիսով անհատը ձգտում է հասարակական ճանաչման: Բազմաբաժին այս առարկան թույլ է տալիս անձի վերոհիշյալ նպատակները ազատորեն իրագործելու քննարկումների, բանավեճերի, բաց զրույցների միջոցով:

Իմացական բաղադրիչ Այն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է, հնարավորություն ստեղծելով իրազեկվել որոնել և գտնել հուզող հարցերի պատասխանները և նրանց լուծման ուղիները: Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն ու առաջնորդությունը, հասարակության իդեալներին հասու լինելու և դրանց համար պայքարելու կարողությունն ու ցանկությունը և այլն: Մեր հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուները, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ ու հասնել դրանց, պետք է ի վիճակի լինեն դիմակայելու արդի մարտահրավերներին, պետք է կարողանան ճիշտ ձևով տիրապետեն, օգտագործեն և տնօրինեն իրենց սեփականությունն ու եկամուտները, հստակ մեկնաբանեն ու դատողություններ անեն կատարվելիք իրադարձությունների մասին:

Առաջին հերթին այս ոլորտների ուսումնասիրությունը ՝Հասարակագիտություն՝ առարկայի առանձնահատկություններից է: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ,

վերջնական լուծումներ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների մոտ զարգացնել խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումները կիրառելու հնարավորությունները:

Այսօր մեր երկիրն ընտրել է ժողվրդավարության և ազատական տնտեսության վրա հիմնված քաղաքացիական հասարակության ստեղծման ուղին, հասարակություն, որը կձևավորվի ազգային արժեքների ու համամարդկային զարգացումների խելամիտ ներդաշնակցմամբ: Ժամանակակից դպրոցը այսօր առավել քան երբևէ, պետք է միտված լինի սովորողների ներուժի բացահայտման, սովորողների անհատականության զարգացմանն ու նրանց համար սեփական յուրօրինակությունն արտահայտելու հնարավորության ստեղծմանը: Ժամանակակից ուսուցչի հիմնական նպատակը պետք է լինի խթանել երեխայի բնականոն զարգացումը և օգնել նրան գտնելու սեփական առաքելությունն այս կյանքում: Դպրոցական տարիքը երեխայի կյանքի բուռն զարգացման ժամանակաշրջանն է: Աշակերտը իր կարողությունների չափով ընկալում է շրջապատող աշխարհն ու որոշում իր տեղն աշխարհում: Իր հարցասիրությունների շնորհիվ և մեծահասակների օգնությամբ նա կարողանում է ճանաչել աշխարհն ամբողջ բազմազանությամբ: Տարրական կրթությունը դպրոցի առաջին աստիճանն է: Այն նախանշում է հաջորդ աստիճանները: Հենց այստեղ են դրվում կրթության բովանդակության հաջող յուրացման, սովորողի անձի հետագա ձևավորման հիմքերը:[4, 35-39]

Դպրոցական կրթության պայմաններում դաստիրակությունը հանդես է գալիս որպես աշակերտների անձի գիտակցության և վարքի ձևավորման հստակ կերպով կազմակերպված ու նպատակաուղղված մանկավարժական գործընթաց: Դաստիրակության մեթոդիկան բացահայտում է աշակերտների դաստիրակության նպատակներն ու բովանդակությունը, դաստիրակության ձևերն ու մեթոդները, նրա արդյունավետ իրագործումն ապահովվող պայմանները: Դաստիարակության ու անձի զարգացման միասնությունն ու փոխկապակցությունը դաստիրակության գործընթացի օրինաչափությունն են: Օրինաչափ կապ գոյություն ունի դաստիարակչական ներգործության, փոխազդեցության և դաստիրակվողների ակտիվ գործունեության միջև: Մանկավարժական գործընթացի կազմակերպումը կառուցվում

է նրա շարժիչ ուժերի հաշվառումով բացասական երևույթների ու փաստերի հաղթահարման և դրական միտումների հաստատման միջոցով:

Արդարացի եմ համարում այն փաստը, որ հասարակության համար արժանի անձ ձևավորելը հումանիստական մանկավարժության գագաթն է, իսկ աշակերտների նկատմամբ հարգանքը դպրոցում տիրող դաստիարկչական փոխհարաբերությունների հիմքերի հիմքն է: Ուսուցչի հարգանքը աշակերտների նկատմամբ հարգանք է դեռահասի, պատանու, աղջկա նկատմամբ: Անձի խնդիրը կարող է լուծվել, եթե ամեն մի մարդու մեջ տեսնել անձնավորությունը: Ինչպես ասել է մանկավարժ Մակարենկոն. «Երեխաները կենդանի կյանքեր են ու գեղեցիկ կյանքեր և դրա համար հարկավոր է նրանց վերաբերվել ինչպես ընկերների ու քաղաքացիների, հարկավոր է տեսնել ու հարգել նրանց իրավունքներն ու պարտականությունները ուրախության ու պատասխանատվության իրավունքը»: Նա նաև ասել է. «Չի կարելի կոփել մարդուն, եթե նրա առաջ չդրվեն դժվար խնդիրներ, որոնք որոշ դեպքերում կարող են ձախողվել: Եթե դուք վախենաք, որ այն ձախողվելու է, չդնեք դժվար խնդիրներ, նշանակում է այն անպայման ձախողվելու է»:

Աշակերտի, որպես անձնավորության, նկատմամբ վերաբերմունքը դժվար գործ է, որը պահանջում է հաղթահարել այնպիսի մեծ ու փոքր դժվարություններ, որոնք մշտապես առաջանում են ուսուցչի և աշակերտների հետ հաղորդակցման պրոցեսում: Երեխայի անձի նկատմամբ հարգանքի յուրահատուկ չափանիշ է նրա նկատմամբ խելացի պահանջկոտությունը: Խելացի պահանջկոտությունը միշտ արդարացնում է իրեն: Պահանջներ ներկայացնող մանկավարժը աշակերտի կողմից պետք է ընկալվի որպես մի մարդ, որը անկեղծորեն շահագրգռված է իր ճակատագրով և խորապես համոզված է իր անձի առաջադիմությամբ:

Պահանջկոտությունը, որքանով էլ, որ արդարացված ու ճշմարիտ լինի, օգուտ չի բերի, եթե այն իրատեսական է, աանկատարելի է, եթե այն հաշվի չի առնում աշակերտի անձի զարգացման առկա ու տրված մակարդակը: Անձնավորությունը հաջողությամբ ձևավորելու համար մանկավարժի ջանքերը պետք է նրա կողմից ընդունվեն պատասխան դրական ռեակցիաներով: Իմ կարծիքով դաստիրակությունը փոխադարձ բարի ցանկության, փոխադարձ վստահության ու հարգանքի արգասիքն է, որոնք սահմանվում են ուսուցչի և աշակերտների միջև: Տիրապետողի և

ենթարկվողի հարաբերությունները, ուսուցչի կողմից երեխայի անձի դաժան ճնշումը նրան միջև ծնում են հակամարտություն, դաստիարակում իրավիճակների նկատմամբ պասսիվ, ինքնակազմակերպման, ինքնուրույն քննադատական մտածողության անընդունակ մարդու։[2, 74-78]

Անձին հարգելու հետ սերտորեն առնչվում է մարդու մեջ դրականի վրա հենվելու սկզբունքը։ Այդ սկզբունքի էությունը կայանում է նրանում, որպեսզի նկատել յուրաքանչյուր երեխայի մեջ ամենից ուժեղ կողմը, հասնել նրան, որ կենսունակությունը իր իրականացումն ու զարգացումը ստանա գործունեության մեջ, որպեսզի երեխայի մեջ փայլատակի մարդկային անհատականությունը։ Դպրոցական պրակտիկայում հարկ է լինում գործ ունենալ դաստիարակվախության տարբեր մակարդակի աշակերտների հետ։ Նրանց մեջ, որպես կանոն, կան այնպիսիները, ովքեր վատ են սովորում, ծուլանում է, արհամարական վերաբերմունք է ցուցաբերում կոլեկտիվի շահերի, հասարակական պարտականությունների ու հանձնարարությունների նկատմամբ։ Սակայն նկատված է որ նույնիսկ ամենից դժվար դաստիրակվող երեխաների մեջ ձգտում գոյություն ունի բարոյական կատարելագործման նկատմամբ, որը հեշտ է մարել, եթե նրան դիմել միայն կշտամբանքներով, հանդիմանություններով, հորդորներով, բայց այն կարելի է պաշտպանել և ուժեղացնել, եթե ուսուցիչը ժամանակին նկատի ու խրախուսի կրտսեր դպրոցականի ամենափոքր պոռթկումները վերացնելու համար վարքի սովորական ձևերը։ Այն կրտսեր դպրոցականները, որոնց շատ հաճախ են հիշեցնում իրենց թերությունների մասին, սկսում են իրենց նայել որպես անուղղելիների։ Ահա թե ինչու է անձի ձևավորման մեջ նպատակահարմար կողմնորոշվել այն բանում ինչ չպետք է անեն նրանք:

Յուրաքանչյուր տարիքի համար բնորոշ են իր սենսորային, ինտելեկտուալ և հուզական գործընթացների ընթացքի առանձնահատկությունները։ Սակայն զարգացման մակարդակը միայն ապրած տարիների արդյունքը չէ։ Ցանկացած տարիքում, հատկապես մանկական, զարգացման վրա որոշիչ ազդեցություն է ունենում դաստիրակչական ներգործությունների համակարգը։ Զարգացման սոցիալական իրավիճակի իմացումը հնարավորություն է տալիս օգտագործելու անձի ներքին ռեսուրսները նրա բոլոր էական ուժերի պահանջմունքների,

հետաքրքրությունների, վարքի ու գործունեության մոտիվացիայի հետագա վերելքի համար: Անհատական դաստիրակչական աշխատանքը հաճախ տարվում է ոչ նրանց հետ, ովքեր դուրս են մնում կոլեկտիվից ու հակադրվում նրան: Այդպիսի պրակտիկան է քննադատել Մակարենկոն. «Մենք սպասում ենք, որ աշակերտը կատարի այս կամ այն զանցանքը, որից հետո սկսում ենք դաստիրակել նրան: Այն աշակերտը, որ զանցանք չի կատարել, մեզ չի զբաղեցնում. ուր է նա գնում ինչ բնավորություն է զարգանում թվացող կարգին արտաքինի տակ մենք չենք իմանում և իմանալ չենք էլ կարողանում»: Այդպիսի մոտեցման դեպքում ստեղծվում է մանկավարժական պատրանք, քանի որ աշակերտը ոչինչ չի կատարում, նշանակում է, նրա հետ ոչինչ առանձնահատուկ տեղի չի ունենում: Այդպես աշակերտի վարքի ներքին միտումները մնում են ուսուցչի ուշադրության սահմաններից դուրս: Դաստիրակողը պետք է տեսնի բոլոր աշակերտներին, յուրաքանչյուր աշակերտ նրա անհատական յուրահատուկ ուղու զարգացմամբ: Միայն այդ դեպքում կարելի է դաստիրակչական աշխատանքի հաջողության հույս ունենալ:[4, 54-55]

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումն ապահովվելու համար պետք է ճանաչել երեխային: Չէ որ մենք գիտենք ինչի ենք ուզում հասցնել երեխային և նրան դաստիրակում համապատասխանաբար: Օրինակ՝ ցանկանում ենք, որ նա ազնիվ լինի, բարեխղճորեն վերաբերվի իր պարտականություններին, և պահանջում ենք այսպիսի կարգ. խրախուսում ենք ճիշտ արարքների համար, պատժում շեղումների դեպքում: Սակայն բոլորին քաջ հայտնի է, որ հաճախ երեխաների մեջ ձևավորվում են անձնավորության ամենևին ոչ այն հատկանիշները և առանձնահատկությունները ինչ սպասում էր ռաուցչուհին: Այդպես է պատահում, որովհետև ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, յուրաքանչյուր երեխա յուրովի է վերաբերվում դաստիրակչական ներգործությանը, այսինքն միևնույն ներգործությունը տարբեր երեխաների վրա կարող է միանգամայն տարբեր տպավորություններ թողնել: Դաստիրակչական ներգործության նկատմամբ երեխայի ռեակցիան կախված է շատ հանգամանքներից նրա պահանջմունքներից և ձգտումներից, որոնք նա ունի անհատական առանձնահատկություններից և արժանիքներից, որոնք նրա մեջ ձևավորել են մարդուց, որը կազմակերպել է այդ ներգործությունը, այն հուզական վիճակից, որը համար է երեխային և, նույնիսկ, նրա վերաբերմունքից այն

գործունեության նկատմամբ, որով նա տվյալ պահին զբաղվում է։ Բերենք օրինակ։ 16 Տարբեր երեխաներ միննույն ներգործությանը կամ իրադրությանը կարձագանքեն տարբեր կերպ կախված պահանջի այն ուժից, որը տվյալ պահին ղեկավարում է նրանց։ Դասերը պատրաստելու համար խաղը կամ ընթերցանությունը դադարեցնելու առաջարկը իր աշխատանքով տարված աշակերտը կընդունի և կկատարի այլ կերպ, իսկ այն աշակերտը, որն այդ աշխատանքի նկատմամբ անտարբեր է մի այլ կերպ։ Եթե երեխան զբաղված է ընթերցանությամբ, կառուցումով կամ մոդելավորմամբ, բայց այնքան էլ տարված չէ իր գործով, որպես կանոն, նա շատ հանգիստ է ընդունում թեթևակի հիշեցումն այն մասին, որ զբոսանքի գնալու կամ դասերը պատրաստելու ժամանակն է։ Նա հեշտությամբ թողնում է այն գործը, որով զբաղվում էր անտարբերությամբ:

Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտները ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում։ 21-րդ դարը այլևս նոր պահանջներ է ներկայացնում։ Հզոր ծրագրերն ու Համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները։ Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը։ Ավելին, տեխնոլոգիաներն ուսումնասիրողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելիլինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը։ Այսօր հստակորեն շեշտադրվում է երեխայի ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը, անձի ձևավորման հիմնահարցը։ Նոր մանկավարժական տեխնոլոգիաները միտված են օգնելու հասնել այդ նպատակներին։ Կան <> հասկացության տարբեր սահմանումներ։ Ահա դրանցից մեկը. այն մանկավարժի գործունեության այնպիսի կառուցում է, որի մեջ մտնող գործողությունները ներկայացված են որոշակի հաջորդականությամբ և ամբողջության մեջ, իսկ դրա իրականացումը ենթադրում է անհրաժեշտ արդյունքների հասնելու պահանջ և օժտված է կանխատեսող բնույթով։ Ըստ գործածության ոլորտների՝ տեխնոլոգիաները լինում եմ՝ ընդհանուր

մանկավարժական, մասնավոր-առարկայական, մոդուլային/լոկալ/: Ընդհանուր-մանկավարժական տեխնոլոգիաները բնութագրվում են մանկավարժական գործնթացի ամբողջական ընդգրկմամբ: Մասնավոր- առարկայական տեխնոլոգիաները իրենցից ներկայացնում են այն բոլոր միյոցների և ձևի ամբողջությունը, որոնցով իրագործվում է ուսուցման բովանդակությունը : Մոդուլային /լոկալ/ տեխնոլոգիաները գործառվում են ուսումնական գործընթացի տարբեր հատվածներում: Ըստ կառուցվածքի և բովանդակության՝ տեխնոլոգիաները լինում են՝ ուսուցանող, դաստիրակող, աշխարհիկ, կրոնական, ընդհանուր – կրթական, մասնագիտական, պոլիտեխնիկական, ներթափանցող և այլն: Ըստ կազմակերպման ձևերի՝ տեխնոլոգիաները լինում են՝ դաս դասարանային, այլընտրանքային/ալտերնատիվ/,ակադեմիական, ակումբային, խմբային, կոլեկտիվ ուսուցման, տարբերակված կրթության և այլն: Ըստ երեխայի նկատմամբ կիրառվող մոտեցումների՝ տեխնոլոգիաները լինում են՝ ավտորիտար, համագործակցային, ազատ դաստիրակության, անձնային կողմնորոշում ունեցող, մարդկային – անհատական և այլն:[3, 42-44]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն այն օղակն է, որն փոխանցում է առարկայական գիտելիքներ, որոնց իմացությունն անհրաժեշտ է կյանքի այս կամ այն իրավիճակներում լուծումներ գտնելու համար: Սակայն առավել կարևոր հիմնահարց է, թե ով է այդ ամենը կրողը, անձնային ինչ որակներ, ինչպիսի անհատականություն է նա: Չէ՞ որ մարդկային ամենապարզ հարաբերություններում դեռ երևացողը ինքնատիպ, ազնվաբարո, պատասխանատու անձի կերպարն է: Հետևաբար դպրոցը առարկայական տարբեր գիտելիքներով զինելուց բացի,անպայմանորեն պետք է կերտի հենց այդպիսի անհատներ:

Ուսուցման ողջ գործընթացն կազմակերպի այնպիսի եղանակներով ու մեթոդներով, որ նաև լուծի նպատակային այդ կարևոր կողմը: Ինչպես նաև կարևոր է հենց ուսուցչի անձնային շփումն ու մոտեցումը աշակերտին. այն պետք է լինի հարգալից: Ուսուցիչն իր վարքով ու խոսքով ամենաակնառու օրինակն է աշակերտի համար:

Գրականության Ցանկ

1.Էլեկտրոնային դասախոսություններ:

2.Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012:

3. Беспалько В. П. Слагаемые педагогоческой технологии. М., Педагогика, 2010:

4. Կարինե Թորոսյան: 5. «Դպիր ամսագիր», Նատալյա Շումակովա: